ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԽՈՒԼԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Հոկտեմբերի 1-ին Գուգարաց թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Խուլերի միջազգային օրվան նվիրված միջոցառում, որի ընթացքում ներկայացվեց «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» ծրագիրը:

Թեմական առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը, ողջունելով և իր հայրական օրհնությունները բաշխելով խուլերին ու միջոցառմանը մասնակից խուլերի ընտանիքների անդամներին, ՀԿ-ների ներկայացուցիչներին, ԵՀԽ Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամի աշխատակիցներին, ծրագրով հետաքրքված արտերկրի հյուրերին, ի մասնավորի ասաց. «Կույրեր, խուլեր.... բոլորի ներկայությունը մեր կյանքում մեզ հուշում է Աստծո ներկայության մասին, որ յուրաքանչյուր ոք Արարչի կողմից ստեղծվել է իր առաքելությունն իրականացնելու համար, իր խոսքն ասելու մեր հանրային կյանքում: Ուրախ եմ, որ բոլորս հավաքվել ենք առաջնորդարանի հարկի ներքո հատկապես ձեզ համար կարևոր և տոնական այս օրը՝ միասին նշելու Խուլերի միջազգային օրը: Ողջունում եմ ձեզ և քաջալերում, որպեսզի ավելի համարձակ լինեք կյանքում: Մի՛ մեկուսացեք և մի՛ առանձնացեք, քանզի դուք ձեր ուրույն տեղն ու դերը, ձայնն ունեք մեր հանրային կյանքում, քանզի մեր ժողովուրդը սիրով է տրամադրված ձեր հանդեպ, իսկ Մայր եկեղեցին մշտապես պատրաստակամ է ձեզ օգնելու և աջակից լինելու»:

Ծրագրի շահառուները՝ խուլ երիտասարդները, ժեստերի լեզվի դասընթացների մասնակիցները, իրենք կարևորեցին և արժևորեցին հուլիսի 1-ից իրականացվող «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» ծրագիրը՝ ներկայացնելով կրթական դասընթացները և մասնագիտական պատրաստվածությանը նվիրված այն աշխատանքները, որոնց մասնակցում են իրենք:

Կարևորելով ժեստերի լեզվի իմացությունը որպես կարևորագույն միջոց հասարակության լսող և ոչ լսող անձանց փոխադարձ ինտեգրման համար, դասընթացը ներկայացնող մասնակիցը նշեց, որ նախատեսված 10-ի փոխարեն արդեն 40 մարդ է անցնում բազային այս կուրսը: Ժեստերի լեզվի բազային ուսուցման երեքամսյա դասընթացները կազմակերպվում են ինչպես խուլ ընտանիքների անդամների համար, այնպես և ծրագրի աշխատակազմի, հոգևորականների, ՀԿ-ների ներկայացուցիրների և բոլոր շահագրգիռ այն անձանց համար, ովքեր պատրաստ են աշխատելու խուլերի հետ: Իսկ ժեստերի լեզվի բազային ուսուցման մասնագետ Զուբեյդա Մելիքյանը, որ «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ կենտրոնական վարչության հրահանգիչ-թարգմանիչն է, սիրով թարգմանեց նաև ողջ միջոցառումը:

Խուլերի համար կազմակերպվող ժեստերի լեզվի հոգևոր բառարանի ուսուցման, համակարգչային, քրիստոնեական և հոգևոր մշակույթին վերաբերող դասընթացների, վարսավիրական, ձեռքի աշխատանքների՝ դիզայնի և ասեղնագործության խմբակների մասին ներկայացրին այդ դասընթացներին ու խմբակներին մաս-

նակից խուլերը, որոնց օգնում և ժեստերի լեզվի դասընթացներն իրականացնում է ժեստերի լեզվի ուսուցիչ Անահիտ Դալալյանը:

Միջոցառման երկրորդ մասը խուլերի ձեռքերի աշխատանքների՝ գոբելեն, իկեբանա, ժանյակ, ցուցահանդեսն էր: Ցուցահանդեսի ընթացքում խուլերին հաճելի անակնկալ մատուցեց Սեպուհ Սրբազանը, ով սիրով գնեց նրանց ձեռքի աշխատանքներից: Սրբազան Հոր կողմից ներկա բոլոր խուլերին տրվեցին նաև գեղեցիկ ֆոտոալբոմներ՝ ի հիշատակ այդ գեղեցիկ օրվա: Իսկ ալբոմները զարդարված էին այն խմբակներն ու դասընթացները պատկերող նկարներով, որոնց մասնակցում են խուլերը: Նկարները սիրով նրանց էր նվիրել «Ֆոտո Խանզադյան» ՍՊԸ տնօրեն Ռուզաննա Խանզադյանը:

Միջոցառումն ավարտվեց թեմի Եկեղեցասեր Երիտասարդաց Միության անդամների կողմից պատրաստված հյուրասիրությամբ:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ